ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

№ ՀԲՄԾՁԲ-7/2-11 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02-ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Դամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «ՀԱԳ-ԳԱՀ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ի. Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.03.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/2-11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը որոշեցին Մարտունու և Սևանի տարածաշրջանների հացաթխման ծառայության մատուցման միավորի գինը նվազեցնել և սահմանել 73.6 ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **434 460.8 (չորս հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր վաթսուն ամբողջ ութսուն) ՀՀ դրամ,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՀԱԳ-ԳԱՀ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ, Կամո մ/ճ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 247180002005 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 08416051 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ | Ի. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

Հավելված N 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-11 գնման պայմանագրի N2 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | Չ/մ | Քանակը | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակների 2019թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1-ին կիսամյակ |
| **1** | **Մարտունու և Սևանի տարածաշրջան, այդ թվում** | կգ | **5903** | **73.6** | **434460.8** | **5903** |
| 1 | Մարտունի - 32236 զորամաս | կգ | 3000 | 73.6 | 220800 | 3000 |
| 2 | Ճաշեն - 32236 զորամաս | կգ | 2903 | 73.6 | 213660.8 | 2903 |

Հավելված N 2
№ ՀԲՄԾՁԲ-7/2-11 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների | *Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ. | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| **1** | **Մարտունու և Սևանի տարածաշրջան, այդ թվում** | **217193.6** | **434460.8** | **434460.8** | **434460.8** | **434460.8** | **434460.8** | **434460.8** | **434460.8** | **434460.8** |
| 1 | Մարտունի - 32236 զորամաս | 110400 | 220800 | 220800 | 220800 | 220800 | 220800 | 220800 | 220800 | 220800 |
| 2 | Ճաշեն - 32236 զորամաս | 106793.6 | 213660.8 | 213660.8 | 213660.8 | 213660.8 | 213660.8 | 213660.8 | 213660.8 | 213660.8 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/50/15/1

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՊԱՊԻԿՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՀԱԳ-ԳԱՀ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Կամո մ/ճ
Հ/Հ 247180002005
ՀՎՀՀ 08416051
տնօրեն

Ի. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ